

ԱՂՊՈՅԱՃՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻ

Արշակ Ալպոյաճյանը հայ մտավորականության հին սերնդի ավագագույն ներկայացուցիչներից է։ Իր կյանքի մեծագույն մասը, ավելի քան 50 տարին, նա նվիրել է հայ մշակույթի հարստացման գործին, նշանակալից ավանդ մուծելով հայ պատմագրության գանձարանը։

Ալպոյաճյանը 1959 թ. հուլիսին բուրից իր ծննդյան 80 տարին։ Պատմաբան-բանասերի և հրապարակախոսի այդ հորելյանը արժանավել կերպով նշվեց սփյուռքահայ գրասեր հասարակայնության կողմից։ Միացյալ Արարական Ռեսպուբլիկայի, Լիբանանի, Ամերիկայի և այլ վայրերի հայ բազմաթիվ առաջավոր թերթեր, շաբաթաթերթեր և ամսագրեր առանձին հոգովածներ նվիրեցին Արշակ Ալպոյաճյանին, դրվատելով ալեգարդ բանասերի ավելի քան 50-ամյա գրական-հասարակական գործունեությունը։

Կահիրեում լույս տեսնող «Արև» թերթը հաղորդում է, որ հայ Գեղարվեստասիրաց Միության և Կոկանյան Ակումբի վարչության նախաձեռնությամբ հուլիսի 19-ին «Կահիրեի մտավորական և ազգային շրջանակները» նշեցին Արշակ Ալպոյաճյանի ծննդյան 80-ամյակը։ Այդ օրը երեկոյան Հելիոպոլիսի Կոկանյան Ակումբի զբոսայգին էին հավաքվել եգիպտահայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ գրողներ, հայկական դպրոցների ուսուցիչներ, ժուռնալիստներ, հորելյարի բազմաթիվ աշակերտներ, հայ առաջադիմական հայրենասիրական կազմակերպությունների անդամներ։

Հակիրճ ճառով հորելյանական երեկոն բաց

է անում Հ. Դարայանը, որը ջերմորեն ողջունում է հորելյարին և դրվատում հայ մշակույթին մատուցած նրա ծառայությունները։

Այնուհետև ելույթներ են ունենում Տիգրան Պապիկյանը, Օննիկ Ավետիսյանը, տիկին Մադլենին, Սահակ Թյուրապյանը և շատ ուրիշներ, որոնք գովեստով են խոսում Արշակ Ալպոյաճյանի՝ որպես հմուտ պատմագետ-բանասերի և հետազոտողի մասին։ Բազմիցս հիշատակվում են հորելյարի «Գրիգոր Զոհրապ» (1919), «Մինաս Զեբազ» (1927), «Պատմություն հայ Կեսարիո» (երկհատոր, 1937), «Պատմություն հայ գաղթականության», «Պատմություն Եվդոկիո հայոց», «Թորգոմ Արքեպիսկոպոս Դուշակյանի» ընդարձակ կենսագրությունը և այլ աշխատություններ, ինչպես նաև արդեն մամուլի տակ գտնվող այնպիսի գործեր, ինչպիսիք են «Հայ գաղթականության պատմությունը» (երրորդ հատոր), «Եգիպտահայոց պատմությունը» (առաջին և երկրորդ հատոր), «Պրուսայի հայոց պատմությունը», «Մալաթիո հայերը» և այլն։

Արշակ Ալպոյաճյանի ծննդյան 80-ամյակի առթիվ ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր։ Սովետական Հայաստանից ստացված հեռագրերի մեջ էին նաև Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի Հայկական ընկերության, Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի, հորելյարի մի շարք աշակերտների ողջույնի և այլ հեռագրեր։

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱԿԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՐԳԵՆ Կաթողիկոս ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ, Ցուցակ ձեռագրաց, Անթիլիաս—Լիբանան, 1957 թ.։

«Ցուցակ ձեռագրացում» ընդգրկված են Անկարայի Կարմիր վանքի և շրջակա հայ եկեղեցիների 323 ձեռագրերը, որոնք, ինչպես

հայտնի է, անհետ կորան 1915 թ. տեղահանության ժամանակ։ Հատորի ներածականում նշված է, որ Բարգեն Կյուլեսերյանն այդ ցուցակագրական աշխատանքը կատարել է 1909—1913 թթ. Անկարայում։ «Ցուցակ ձեռագրացում» լույս է տեսնում առաջին անգամ։

Եւ իյուլիսերյանն իր ցուցակը կազմելիս հետեւել է ցուցակագրական դասական հայանի ձեռն. նա մանրամասն տեղեկութիւններ է տալիս յուրաբանչութիւն ձեռագրի էջերի քանակի, ծավալի, գրչութեան տեսակի, էջերի տողաքանակի, վերնագրերի, կազմի, գրչի, գեղանկարչի, գրչութեան վայրի, թվականի և ստացողի մասին: Եւ այդ՝ նա կազմել է յուրաբանչութիւն ձեռագրի բովանդակութեան ամփոփումը:

Շուրջակ ձեռագրացումն ժամանակագրական կարգով ամենահին ձեռագիրը մի մեկնութիւն է՝ գրված XII դարում: Մի շարք ձեռագրեր հասել են XIII—XIV դարերից: Ձեռագրերի մեծ մասը գրված են XVII—XIX դարերում: Կան Գրիգոր Տաթևացու գործի բազմաթիվ մեկնություններ, և մի Դովլաթի բժշկականների օրինակներ (ամենահինը 1496 թ.), բառարաններ, քերականութեան համառոտ դասընթացներ (գրանցից մեկը պարսկերէն լեզվի համար) և դավանաբանական ու կրօնական թղթեր:

Շուրջակ ձեռագրացումն զետեղված են մի շարք ծածկագրեր՝ Բարդէն Կյուլեսերյանի մեկնությամբ:

Հայոց պատմությունը անգլերէն

Նյու-Յորքում լույս է տեսել Վահան Մ. Քյուրքճյանի «Հայոց պատմություն» աշխատու-

թիւնն անգլերէն լեզվով: Վ. Մ. Քյուրքճյանի մենագրութիւնը բաղկացած է 550 էջերից: Այդ աշխատութիւնն ընդգրկում է հայ ժողովրդի պատմութիւնը՝ սկզբից մինչև մեր օրերը: Հատուկ բաժիններով ներկայացված են հայոց հին ու նոր գրականութիւնը, գիցարանութիւնը, զարգացումը, ճարտարապետութիւնը, արվեստը և այլն: Վ. Մ. Քյուրքճյանի գիրքը պարունակում է ավելի քան հարյուր նկար:

Արարկիրի պատմագիր

Արարկիրի Հայրենակցական միութեան կենտրոնական վարչութիւնը նախաձեռնում է հրատարակելու մեծածավալ մի ուսումնասիրութիւն՝ Արարկիրի, նրա շրջակա գյուղերի և նոր Արարկիրի (Սովետական Հայաստանում) վերաբերյալ: Ինչպես տեղեկացնում է «Արարկիր» թերթը, այդ առթիվ Կենտրոնական վարչութիւնը զիմել է բոլոր գրադարաններին, կրթական հաստատութիւններին, արարկիրցի հայրենակիցներին և այլ անձանց, խնդրելով Արարկիրի պատմության վերաբերյալ իրենց մոտ եղած գրքերը, մամուլում լույս տեսած հեղվածներն ու թղթ-թակցութիւնները, անձնական հուշերը, լուսանկարները, ինչպես և պատմական նշանակութիւն ունեցող փաստաթղթերը տրամադրել իրեն:

ԱՐԱՅԱՍԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՈՒ

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ, Թերթիս կիլիկացի, Երթա քիվր, Արծալ էջեր, Բեյրութ, 1958 թ.:

Այս հատորում զետեղված են Շահան Շահնուրի յոթ ստեղծագործութիւնները՝ «Արարկիր», «Արար կա, որ կճաճանչե», «Գրանսահայ տղանցը», «Գրական էջ մը», «Արդար զնդակահարութիւն մը», «Առաջին բայեր փակուղիին մէջ», «Հեռավոր երկիր» Գրանք 1931—1939 թթ. առաջին անգամ տպագրվել են սփյուռքահայ մամուլի էջերում և իրենց բնույթով ու ժանրով տարբեր ստեղծագործութիւններ են պատմվածք, գրական վերլուծութիւն, այլաբանական պատմութիւն, թղթակցութիւն, բանաստեղծական արծալ և այլն: Հեղինակն աշխատել է «տալ մտաւորութիւններն ու հակումները ժամանակաշրջանի մը», որն ընդգրկում է ըսփյուռքահայ կյանքի 1922—1930 թվականները, երբ արեւմտահայութեան կարեւոր մի մասը գաղթականի ցուպը ձեռին հանգիստ ու հաց էր որո-

նում օտար աստղերի տակ: Հայ ժողովրդի գրժարատեան գլխավոր պատասխանատուների նկատմամբ խիստ ըննադատութեան շունչը կարմիր թելի նման անցնում է ամբողջ գրքի միջով:

Հայ մշակույթին նվիրված հանդես Նյու-Յորքում

Ամերիկահայ «Արարկիր» թերթը հաղորդում է, որ Նյու-Յորքում Հայ Մշակույթի տանը կազմակերպվել է հանդես, ուր գրող Անդրանիկ Անդրեասյանը ելույթ է ունեցել հայ կուլտուրայի պատմության վերաբերյալ: Զեկուցողը առանձնապես շեշտել է հայ կուլտուրայի բոլոր բնագավառների ծաղկումը Սովետական Հայաստանում. «Սեր հայրենիք, — ասել է նա, — այսօր իր ծոցին է հայտ կրեր և աշխարհահռչակ բազմաթիվ գիտնականներ ու արվեստագետներ, ինչպիսիք են Վ. Համարձումյանը, Ա. Խաչատրյանը և ուրիշներ»:

Երեկոյի երկրորդ մասը նվիրված էր հայ երաժշտութեանը՝ Վատարվել են Ալ. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Գ. Ալեմշահի, Ա. Սաթյանի, Հ. Պերպերյանի և հայ այլ կոմպոզիտորների ստեղծագործութիւններին:

**Բանաստեղծ Հ. Անտոնյանի
50-ամյա հոբելյանը**

«Պայքար» թերթից տեղեկանում ենք, որ Նյու-Յորքի գրասեր հայ հասարակայնութիւնը

հանդիսավորապէս նշել է ամերիկահայ բանաստեղծ Հակոբ Անտոնյանի գրական գործունեութեան 50-ամյա հոբելյանը: Իր մեծարանքի իրոսքում, բնութագրելով ծերունագարդ բանաստեղծի գրական վաստակը, արձակագիր Բենիամին Նուրիկյանն ասել է. «Հակոբ Անտոնյան իր էութեամբ ու հոգիով մեր արևմտահայ գրականութեան աչքառու բանաստեղծներուն շառավիղն է: Իր ստեղծագործ մտքի վաստակը, ճոխ ու ինքնատիպ, եզական տեղ ունի մեր բանաստեղծական անդամտանի մէջ»: